ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 10

« 06 »փետրվարի 2020թ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՅՈՎԱ ԱՍՔԱՆԱԶԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լյովա Ասքանազի Սահակյանին 2020 թվականի փետրվարի 05 -ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Սարահարթ համայնքի 1փողոց 13 տնակ հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Լյովա Ասքանազի Սահակյանին հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 1-ին և 2-րդ եռամսյակների համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

10.02.2020թ

ՈՐՈՇՈՒՄ 11

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով՝

Որոշում եմ՝

1. Սարահարթի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (1.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2020թ մարտի 13 -ին ժամը 15:00-ին Սարահարթի համայնքապետարանում անցկացնել մրցույթ:
2. Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն https://www.azdarar.am// հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնականինտերնետային կայքում և այդ մասին 2-օրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:
3. Մրցույթային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Սուսան Կիրակոսյանին:

Սարահարթ համայնքի ղեկավար Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

10.02.2020թ

ՈՐՈՇՈՒՄ 12

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների 10.06.2008թ. 27.04.2010թ ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 1004 որոշմամբ,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,ՀՀ կառավարության 18 մայիսի 2006թ թիվ912-ն որոշման 9-րդ կետի,ՀՀ 510-ն օրենքի պահանջներով <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 27.03.1993թ թիվ 1 որոշումը,հողի սահմանների ճշտության վերաբերյալ Տ. Վարդանյանի կողմից կազմված հատակագիծը և հարգելով Գագիկ Քարամյանի և մյուսների դիմում խնդրանքը այն մասին,որ Սարահարթ համայնքում 06-097-0022-0015 ծածկագրի տակ գտնվող 0.12հա սեփականության իրավունքով իրենց պատկանող տնամերձ հողամասի վրա 1994թ կառուցել է 30.33քմ մառան:

Նկատի ունենալով, որ տվյալ կառույցի պահպանումը չի խաղտում այլ անձանց իրավունքները, և օրենքով պահանջող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և քանի որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խաղտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում, ուստի ելնելով վերոգրյալից

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Օրենքի ուժով վերականգնել և ճանաճել Գագիկ Վարազդատի Քարամյանի իրավունքը Սարահարթ համայնքում 06-097-0022-0015 ծածկագրի տակ գտնվող 0.12 հա տնամերձ հողամասի և նրա վրա 1994թ կառուցված 30.33քմ մառանի նկատմամբ:

2.Օրենքի ուժով ճանաչել որպես ինքնակամ կառույց նույն հողամասի վրա 2016թ կառուցված 41.17քմ անասնագոմի նկատմամբ:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան